

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՔՆՆԱՐԿՈՒՄ «ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

19.03.2025 20:52



ՀՀ փաստաբանների պալատում տեղի է ունեցել քննարկում «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվող վիճարկման հայցը վարույթ ընդունելու խնդրահարույց դրույթների վերաբերյալ:

Քննարկումը նախաձեռնվել էր հաշվի առնելով մասնագիտական հանրույթում հնչած բազմաթիվ բացասական արձագանքները, ինչպես նաև նախագծի հնարավոր ազդեցությունը մարդու իրավունքների պաշտպանության կառուցակարգերի վրա:

Քննարկմանը մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի, ՀՀ դատական դեպարտամենտի, ՓՄՁ ասոցացիայի, ինչպես նաև գիտական հանրույթի և հասարակական կազմակերպությունների այլ ներկայացուցիչներ:

Ելույթ ունեցողները ներկայացրել են նախագծի խնդրահարույց դրույթները և հնարավոր բացասական հետևանքները, իսկ ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացուցիչը հայտնել է, որ դատական իշխանությունը ևս խնդրահարույց է դիտարկել առաջարկվող փոփոխությունները:

Վեր են հանվել հետևյալ խնդիրները՝

- Նախագիծը խնդրահարույց է սահմանադրականության տեսանկյունից՝ հատկապես արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման, դրա կառուցակարգերը և ընթացակարգեր սահմանելու մասով,
- չեն պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով սահմանված՝ նախագծի ազդեցության գնահատման, կարգավորման նպատակները բացահայտելու, ակնկալվող արդյունքը նշելու և այլ պահանջները,
- վիճարկման հայցերով վարչական ակտի կատարումը օրենքի ուժով կասեցնելու հնատիտուտի վերացումը հսկայական հետընթաց քայլ է վարչական դատավարության հայեցակարգից և էականորեն սահմանափակում է ֆիզիկական ու իրավաբանական

անձանց իրավունքները,

- վարչական ակտի կատարումը օրենքի ուժով կասեցնելու ինստիտուտը հայցի ապահովման ինստիտուտի փոխակերպելը բացարձակապես անընդունելի է,
- 2024թ. քննված վարչական ակտերի վիճարկման գործերի քանակը 2022-2023թթ համեմատությամբ աճել է և կրկնապատկվել, ինչը բնութագրում է վարչական դատարանի նկատմամբ վստահության աճի միտումը,
- 2022-2024թթ. քննված վարչական ակտերի վիճարկման գործերով 75-80% բավարարված հայցերի քանակը փաստում է վարչական մարմինների կողմից իրականացված վարչարարության ոչ պատշաճ լինելը,
- որպես միջազգային փորձ, նախագծի հիմնավորումներում նշված երկրներում գործող իրավակարգավորումները ներկայացվել են թերի, ոչ ամբողջական և ընդհանրապես չեն հիմնավորում նախագծի ընդունման անհրաժեշտությունը:

Քննարկման ավարտին մասնակիցները եկել են ընդհանուր հետևության, որ ՆԱԽԱԳԻԾՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՀԱՆԵԼ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԻՑ:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```